Հավելված N 6
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 31-ի N 1050 - Ա որոշման

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ՖԻԼՄ ՍՏՈՒԴԻՈՍ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ,

«ՍԻ ԷՍ ՄԵԴԻԱ ԷՆԹԵՐՓՐԱՅԶԻՍ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ք. Երևան

[ենթակա է լրացման], **2015թ.**

<u>ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ</u>

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս_____
_____ (այսուհետ՝**«Ստացող»**),

«Ֆիլմ Ստուդիոս» փակ բաժնետիրական ընկերությունը («Արմենիա Ստուդիոս» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդ հանդիսացող), ի դեմս Էդգար Ավագյանի, ով գործում է բաժնետերերի՝ 2015թ. հունիսի 15-ին կայացած արտահերթ նիստի որոշման հիման վրա (այսուհետ՝**«Փոխանցող 1»**), և
«Սի Էս Մեդիա Էնթերփրայզիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս Արեգ Լազարյանի, ով գործում է ընկերության 2015թ. հունիսի 15-ի որոշման հիման վրա (այսուհետ՝**«Փոխանցող 2»**), այսուհետ Փոխանցող 1-ը և Փոխանցող 2-ը միասին և առանձին հիշատակվելիս համապատասխանաբար՝ **«Փոխանցող» կամ «Փոխանցողներ»,**
(այսուհետ Ստացողը և Փոխանցողները միասին կամ առանձին հիշատակվելիս համապատաս-խանաբար՝ **«Կողմեր»** կամ **«Կողմ»**)

կնքեցին Բաժնետոմսերի փոխանցման սույն համաձայնագիրը (այսուհետ՝ **«Համաձայնագիր»**) 2015 թվականի [ենթակա է լրացման]-ին, քաղաք Երևանում:

<u>Հաշվի առնելով այն, որ</u>

– Փոխանցողները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված և գործող **«Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» փակ բաժնետիրական ընկերության** (գրանցման հասցեն՝ ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի 30, (այսուհետ՝ **«Ընկերություն»**) բաժնետերերը, որոնց միասին պատկանում է Ընկերության --------հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը, յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1.00 դրամ, որոնք կազմում են Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը, ինչը հավաստվում է Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարող «Արմենբրոկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ **«Ռեեստրավար»**) կողմից [ենթակա է լրացման]-թ. տրված ռեեստրի քաղվածքով (այսուհետ նշված բաժնետոմսերը միասին՝ Բաժնետոմսեր): Փոխանցող 1-ը Ընկերության ---------- հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատերն է, իսկ Փոխանցող 2-ը Ընկերության մնացած ---------- հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատերն է,
- Ստացողը և Փոխանցող 1-ը 2005 թվականի **սեպտեմբերի 14-ին** կնքել են Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքն օտարելու մասին N 321-Օ պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր),
– Փոխանցող 1-ը Պայմանագրով ձեռք բերված ամբողջ գույքը ներդրել է Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում (այսուհետ՝ Ընկերություն),
– Փոխանցող 1-ը և Ստացողը համաձայնել են լուծել Պայմանագիրը և իրականացնել լուծման գործընթացը Ընկերության՝ Փոխանցողներին պատկանող բոլոր բաժնետոմսերը Ստացողին փոխանցելու և Փոխանցող 1-ի կողմից Պայմանագիրի շրջանակում վճարված գումարը հետ վերադարձնելու եղանակով,
– Փոխանցող 2-ը համաձայնել է Փոխանցող 1-ի՝ Ընկերության բոլոր Բաժնետոմսերը

Ստացողին փոխանցելու առաջարկին՝ Փոխանցող 1-ի և Ստացողի միջև կնքված Լուծման համաձայնագրին (այսուհետ՝ Լուծման համաձայնագիր)՝ համաձայն Պայմանագրի լուծման նպատակով,

– Ստացողը տվել է իր համաձայնությունն Ընկերության վերակազմակերպմանը, որի արդյունքում Ընկերությունից առանձնացված [ենթակա է լրացման] փակ բաժնետիրական ընկերությանն անցել է սույն Համաձայնագրի N 1 հավելվածում նշված գույքը, որի մասով Ստացողն Ընկերության և Փոխանցողների նկատմամբ որևէ պահանջ չունի,

– Սույն Համաձայնագրի ստորագրումն ու պատշաճ կնքումն ուժի մեջ են դնում Լուծման պայմանագիրը:

Կողմերը համաձայնել են կնքել սույն Համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համաձայնագրով Փոխանցողները պարտավորվում են Ստացողին փոխանցել Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը, իսկ Ստացողը պարտավորվում է Փոխանցողներին վճարել սույնով սահմանված և Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման միջոցով Գույքի փոխանցման վճարը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փոխանցողները պարտավորվում են Ստացողի արժեթղթերի հաշվին փոխանցել Բաժնետոմսերը սույն Համաձայնագրի ստորագրումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ պայմանով, որ Ստացողը պատշաճ կերպով փոխանցել է Գույքի փոխանցման վճարը Փոխանցողներին՝ սույն Համաձայնագրի 2.2-րդ կետի պահանջներին համապատասխան:

2.2. Ստացողը պարտավորվում է Փոխանցողներին վճարել Բաժնետոմսերի փոխանցման դիմաց **բաժնետոմսերի (գույքի)** փոխանցման վճարը ***(ինչպես ներկայացված է Լուծման համաձայնագրում),*** որը կազմում է **345, 000,000 դրամ (այսուհետ՝ Գույքի փոխանցման վճար)՝** սույն Համաձայնագիրը կնքելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում: Գույքի փոխանցման վճարը ենթակա է փոխանցման Փոխանցողներին հետևյալ մասնաբաժիններով՝ 104,604,000 դրամ Փոխանցող 1-ին և 240,396,000 դրամ Փոխանցող 2-ին:

3. ՓՈԽԱՆՑՈՂՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

3.1. Փոխանցողները հաստատում և երաշխավորում են, որ սույն Համաձայնագրի ստորագրման պահին (և ինչպես նշված է Ընկերության կողմից տրված և կցված Բացահայտման նամակում)՝

3.1.1. Ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տարածքում երկրի օրենսդրության համաձայն գրանցված իրավաբանական անձ.

3.1.2. ձեռք են բերել Համաձայնագիրը կնքելու, կատարելու և Համաձայնագրով նախատեսված գործարքները կնքելու համար պատշաճ կերպով ձևակերպված անհրաժեշտ բոլոր թույլտվությունները.

3.1.3. Փոխանցողները Բաժնետոմսերի իրական սեփականատերերն են և երրորդ անձինք չունեն Բաժնետոմսերի նկատմամբ որևէ իրավունք, այդ թվում՝ սեփականության և գրավի, Բաժնետոմսերը արգելանքի տակ չեն գտնվում, վեճի առարկա չեն և դրա օտարմամբ Փոխանցողներն չեն խախտում որևէ պայմանագրային պարտավորություն.

3.1.4. Ընկերությանն է պատկանում Համաձայնագրին կից N 2 հավելվածում թվարկված գույքերը.
3.1.5. Ընկերությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ընկերության, կազմակերպության, համատեղ կազմակերպության կամ այլ անձի չտեղաբաշխված բաժնետոմսեր, բաժնեմասեր, այլ արժեթղթեր կամ քվեարկության իրավունք տվող այլ բաժնետոմսեր և բաժնեմասեր չեն պատկանում.
3.1.6. Ընկերության ակտիվները և գույքն ազատ են երրորդ անձանց պայմանագրային և (կամ) այլ իրավունքներից, այլ կերպ ծանրաբեռնված չեն, և որևէ անձ Ընկերությանը գրավոր պահանջ չի ներկայացրել առ այն, որ իրավունքներ ունի դրա ակտիվների և գույքի նկատմամբ.
3.1.7. Ընկերության կողմից պատշաճ կերպով կատարվել են Ընկերության գործունեությունից բխող՝ ՀՀ օրենքով սահմանված բոլոր հարկային պարտավորությունները և Ընկերությունը չունի ոչ մի չկատարված հարկային պարտավորություն՝ բացառությամբ սույն Համաձայնագրին որպես N 3 հավելված կցված հարկային ստուգման հաշվետվությամբ սահմանված ընթացիկ հարկային պարտավորությունների:
3.1.8. Ընկերության կողմից պահպանվել են իր գործող կանոնադրության, այլ ներքին իրավական ակտերի բոլոր դրույթները, ինչպես նաև կիրառելի օրենքների և պետական մարմինների այլ ակտերի բոլոր պահանջները.
3.1.9. Ընկերության նկատմամբ սնանկության վարույթ հարուցված չէ.
3.1.10. Ընկերությունը չի դադարեցրել կամ հետաձգել պարտքերի մարումը, անվճարունակ չի դարձել և անվճարունակ չի ճանաչվել: Ընկերության պարտքերի ցանկը կցված է սույն Համաձայնագրին որպես N 4 հավելված: N 4 հավելվածում նշված այդ պարտքերը Փոխանցողների և Փոխանցողների հետ փոխկապակցված անձանց կողմից Պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագրի համաձայն (կցված սույն Համաձայնագրին՝ որպես N 5 հավելված) փոխանցվում են Ստացողին:
3.1.11. Ընկերության հաշիվները և հաշվետվությունները պատշաճ կերպով վարվել են և ճշտորեն արտացոլում են Ընկերության ֆինանսական դրությունը: Ընկերությունը չունի որևէ պարտավորություններ, որոնք պատշաճ կերպով ներկայացված չեն Ընկերության հաշիվներում և հաշվապահական գրքերում: Փոխանցողները միասին և նրանցից յուրաքանչյուրը սույնով հաստատում և ստանձնում է պարտավորություն պատասխանատվություն կրել Ընկերության չբացահայտված պարտավորությունների համար (բացառությամբ հարկային պարտավորությունների) Բաժնետոմսերի՝ Ստացողին փոխանցմանը հաջորդող 12 ամիսների ընթացքում և ոչ ավելի, քան 100,000 ԱՄՆ-ի դոլարին կամ դրան համարժեք ցանկացած այլ արժույթին համապատասխան գումարի չափով: Կասկածներից խուսափելու համար Փոխանցողները որևէ պատասխանատվություն չեն կրում որևէ հայցի, պահանջի կամ պարտավորության համար, որը ծագել է 2005 թվականի հոկտեմբերի 12–ից շուտ:

4. ՍՏԱՑՈՂԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԸ

4.1. Ստացողը հաստատում և երաշխավորում է Փոխանցողներին, որ՝
4.1.1. Սույն Համաձայնագրի կնքումը պատշաճ կերպով հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության [ենթակա է լրացման] որոշմամբ.
4.1.2. սույն Համաձայնագրի 2.2-րդ կետով սահմանված Գույքի փոխանցման վճարի վճարումը և Համաձայնագրի 2.1-ին կետով սահմանված կարգով Բաժնետոմսերի փոխանցման իրականացումը հանգեցնում է Պայմանագրի լուծման՝ համաձայն Լուծման Համաձայնագրի և ազատում է Ընկերությանը և Փոխանցողներին, նրանց բաժնետերերին, ղեկավարներին, տնօրեններին, աշխատակիցներին և նրանց հետ փոխկապակցված անձանց Պայմանագրից

բխող կամ դրա հետ կապված այլ համաձայնագրերից և պայմանագրերից, Լուծման համաձայնագրից և սույն Համաձայնագրից կամ դրանց կապակցությամբ ծագող ցանկացած և բոլոր պարտավորություններից, եթե սույն Համաձայնագրով այլ բան սահմանված չէ (կետ 3.1.11.):

5. ՓՈԽԱՆՑՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Փոխանցողներն իրավունք ունեն պահանջել Ստացողից տույժի վճարում Գույքի փոխանցման վճարի փոխանցման կետանցի յուրաքանչյուր օրվա համար Գույքի փոխանցման վճարի 0.1%-ի չափով:

5.2. Փոխանցողները պարտավորվում են՝

5.2.1. Ստացողին փոխանցել Բաժնետոմսերն առանց ծանրաբեռնվածությունների, ազատ երրորդ կողմերի իրավունքներից կամ պահանջներից,

5.2.2. Ստացողին Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցելու նպատակով ներկայացնել բոլոր հաշվետվությունները, գրանցման վկայականները, քաղվածքները և այլ փաստաթղթեր, որոնք պետք է տրամադրվեն Ռեեստրավարին և պետական մարմիններին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2.3. Ձեռնարկել բոլոր միջոցները՝ Համաձայնագրով նախատեսված գործարքների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող դիմումները, ծանուցումները և այլ փաստաթղթերն անհապաղ պատրաստելու և համապատասխան մարմիններին ներկայացնելու համար՝ ներառյալ ապահովել իր ներկայությունը Ռեեստրավարի մոտ, համապատասխան պետական մարմինների թույլտվություններն ու համաձայնությունները ձեռք բերելու կամ Համաձայնագրով նախատեսված գործարքների իրականացման համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար՝ ներառյալ գրանցելու Բաժնետոմսերի նկատմամբ Ստացողի սեփականության՝ Համաձայնագրի պայմաններին համաձայն:

6. ՍՏԱՑՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Ստացողն իրավունք ունի պահանջելու Փոխանցողներից և յուրաքանչյուր Փոխանցողից տույժի վճարում՝ Բաժնետոմսերի փոխանցման կետանցի յուրաքանչյուր օրվա համար Գույքի փոխանցման վճարի 0.1%-ի չափով:

6.2. Ստացողը պարտավորվում է Համաձայնագրով սահմանված կարգով Փոխանցողներին փոխանցել Գույքի փոխանցման վճարը:

7. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1. Համաձայնագիրը կարող է լուծվել հետևյալ դեպքերում՝

7.1.1. Կողմերի գրավոր համաձայնությամբ,

7.1.2. Կողմերի կողմից Համաձայնագրի պատշաճ կատարմամբ, ինչի կապակցությամբ կնքվում է Ավարտական ակտ՝ հաստատելով Բաժնետոմսերի պատշաճ փոխանցումը և Գույքի փոխանցման վճարի վճարումը համապատասխան Կողմերին: Ավարտական ակտի նախագիծը կցված է սույն Համաձայնագրին՝ որպես N 6 հավելված:

7.1.3. Համաձայնագիրը չխախտող Կողմի կողմից Համաձայնագիրը խախտում թույլ տված Կողմին 10 օր առաջ նախնական գրավոր ծանուցմամբ՝ սույն Համաձայնագրի ցանկացած խախտման համար, որը չի վերացվել Համաձայնագրի խախտում թույլ տված Կողմի կողմից ծանուցման ստացմանը հաջորդող 5 օրվա ընթացքում:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. **Ծանուցումներ.** Համաձայնագրից բխող ցանկացած ծանուցում, դիմում, հրահանգ կամ որևէ այլ փաստաթուղթ պետք է ներկայացվի գրավոր և հանձնվի առձեռն կամ ուղարկվի ֆաքսով (ստացող կողմի հաստատմամբ), գրանցված կամ պատվիրված նամակով (ստացող կողմի հաստատամբ)՝ նախապես վճարելով փոստային ծառայության վճարները՝ հետևյալ հասցեներին.

Ստացողի դեպքում՝
Հայաստանի Հանրապետություն
[ենթակա է լրացման]

Փոխանցող 1-ի դեպքում՝
«Ֆիլմ Ստուդիոս» ՓԲԸ
Եղվարդի խճուղի, 1,
Երևան, 0054 ՀՀ

Փոխանցող 2-ի դեպքում՝
«Սի Էս Մեդիա Էնթերփրայզիս» ՍՊԸ
150 Սաութ Ֆիֆթ Սթրիթ, Սյուիթ 1360, Մինեապոլիս, 55402 Մինեսոթա, ԱՄՆ

Նշված ծանուցումը, դիմումը, հրահանգը կամ որևէ այլ փաստաթուղթ համարվում է ստացված այն առձեռն հանձնելու կամ ֆաքսով ուղարկելու (ստացող կողմի հաստատմամբ) օրը կամ երրորդ աշխատանքային օրը, եթե այն ուղարկվել է գրանցված կամ պատվիրված նամակով՝ նախապես վճարելով փոստային ծառայության վճարները: Նշված անձանցից յուրաքանչյուրը կարող է փոխել իր հասցեն՝ ծանուցելով դրա մասին մյուս Կողմին՝ սույն կետով սահմանված կարգով:

8.2. **Պայմանագիր:** Սույն Պայմանագիրը և մյուս բոլոր պայմանագրերը (օրինակ՝____թ. կնքված Լուծման Համաձայնագիրը) հանդիսանում է Կողմերի միջև սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ ամբողջական և միակ համաձայնությունը և գերակայում է Կողմերի միջև նախկինում առկա բոլոր գրավոր կամ այլ տեսակի համաձայնությունների ու պայմանագրերի նկատմամբ:
8.3. **Իրավահաջորդներ.** Համաձայնագրի բոլոր պայմանները պարտադիր են Համաձայնագրի Կողմերի և նրանց իրավահաջորդների համար:
8.4. **Համաձայնագրի օրինակները**. Համաձայնագիրը կազմված է 4 բնօրինակից՝ հայերեն և անգլերեն՝ յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ չորրորդ օրինակը կցվում է Լուծման Համաձայնագրին: Հայերեն և անգլերեն տեքստերի միջև հակասությունների դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:
8.5. **Կիրառելի իրավունք.** Համաձայնագիրը կազմված է և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության իրավունքով:

8.6 Վեճերի լուծման կարգը. Համաձայնագրից բխող կամ դրա կապակցությամբ առաջացող վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով՝ ՀՀ համապատասխան իրավասու դատարաններում:

ՓՈԽԱՆՑՈՂ 1/TRANSFEROR 1
«Ֆիլմ Ստուդիոս ՓԲԸ/Film Studios cjsc Էդգար Ավագյան / Edgar Avagyan

ՓՈԽԱՆՑՈՂ 2/ TRANSFEROR 2
«Սի Էս Մեդիա Էնթերփրայզիս» ՍՊԸ/CS Media Enterprises LLC
Արեգ Լազարյան /Areg Lazaryan

Հավելված N 1

Բաժնետոմսերի Փոխանցման Պայմանագրի

Առանձնացվող Ընկերությանը փոխանցվող գույքի ցանկ

ք. Երևան, Աշտարակի խճուղի 30/3 հասցեում գտնվող հողակտոր.

Հողամասերի նկարագրությունը	**Կադաստրային ծածկագիրը**	**մակերեսի չափը (հա)**	**Արժեք, ՀՀ դրամ**
ք. Երևան, Աշտարակի խճուղի, 30/3 հասցեում գտնվող հողակտոր, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 11032015-01-0121	01-004-0061-0029	3.842235	225,134,609

Տվյալ հողամասի վրա գտնվող շենք, շինությունները.

ք. Երևան, Աշտարակի խճուղի, 30/3 հասցեում գտնվող շենք, շինությունները	**Կադաստրային ծածկագիրը**	**Մակերեսիչափը, ք.մ**	**Արժեք, ՀՀ դրամ**
Հսկիչ կետ	01-004-0061-0029-001-000	16.3	2,378,000
Հրշեջ մասնաշենք	01-004-0061-0029-002-000	391.3	11,378,000
Ենթակայան	01-004-0061-0029-003-000	13.0	1,097,000
Կիսակառույց	01-004-0061-0029-004-000	105.8	1,011,000
Ավտոարտադրամաս	01-004-0061-0029-005-000	1,378.4	52,531,000
Ավտոարտադրամաս	01-004-0061-0029-006-000	1,271.5	85,871,000
Հսկիչ կետ	01-004-0061-0029-007-000	25.2	1,842,000
Պարիսպ, 58 ք.մ, 133.4 խ.մ	01-004-0061-0029-010	58.0	2,540,000
Ջերմոց ինքնակամ		2,144.3	86,844,000
Ինքնակամ կիսակառույց		367.2	3,969,000
Ընդամենը		**5,771.0**	**249,461,000**

«Համո Բեկնազարյանի անվան
«Հայֆիլմ» կինոստուդիա»
Փակ Բաժնետիրական Ընկերության Բացահայտման նամակ

«Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» Փակ Բաժնետիրական Ընկերության(այսուհետ՝ Ընկերություն) սույն Բացահայտման նամակը ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

1. Ընկերությանը պատկանող Ակտիվների ցուցակ (Բաժնետոմսերի փոխանցման պայմանագիր, Հավելված 2):
2. Հարկային տեսչության հաշվետվություն (Բաժնետոմսերի փոխանցման պայմանագիր, Հավելված 3):
3. Ընկերության պարտավորությունների և Պայմանագրերի ցուցակ (Բաժնետոմսերի փոխանցման պայմանագիր, Հավելված 4):

Սույն Բացահայտման նամակը կցված է Հայաստանի Հանրապետության Կառավարության, Ֆիլմ Ստուդիոս ՓԲԸ-ի և Սիէս Մեդիա Էնթերփրայզիս ՍՊԸ-ի միջև կնքված Բաժնետոմսերի փոխանցման պայմանագրին:

Սույն Բացահայտման նամակը ստորագրված է ….թ. … …-ին ՀՀ, ք.Երևանում:

_____

Խաչատուր Ցոկոլակյան,
Գլխավոր տնօրեն,
«Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ

Khachatur Tsokolakyan,
General Director,
Film Studio Hayfilm after Hamo Beknazaryan cjsc

Հավելված N 2

Բաժնետոմսերի Փոխանցման Պայմանագրի

Ակտիվների ցուցակ

1. Հիմնական միջոցներ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐ

Անվանումը	**Պետ. Համարանիշ**	**Քանակ**	**Արժեք, ՀՀ դրամ**
Ավտոմեքենա MITSUBISHI CANTER NLTFE71AB01004811	494 US 65	1	5,000,000
Ավտոմեքենա MITSUBISHI OUTLANDER JMYXLCW6W9Z700355	491 US 65	1	5,000,000
Ավտոմեքենա ՈՒՐԱԼ-375-432021 /դիզել/	689 SL 65	1	3,500,000
Ավտոմեքենա ԳԱԶ-53-Ա ԿՐԱՆ	699 SL 65	1	167,500
Ավտոմեքենա ՈՒՐԱԼ-375-100/դիզել/	942 SL 65	1	390,000
Ավտոմեքենա ԳԱԶ-14	697 SL 65	1	50,000
Ավտոմեքենա ԳԱԶ-24	155 LL 02	1	100,000
Ավտոմեքենա Mitsubishi L-300	106 SU 65	1	50,000
Ավտոմեքենա ՊԱԶ-762 /ավտոբուս/	690 SL 65	1	382,500
Ավտոմեքենա ԶԻԼ-431412/ջրի մեքենա/	687 SL 65	1	213,000
Ավտոմեքենա ՈՒՐԱԼ-375-100/դիզել/	78-36 АДБ	1	390,000
Ավտոմեքենա ԳԱԶ-24	696 SL 65	1	100,000
Ավտոմեքենա ԳԱԶ-5312	38-66 АДМ	1	150,000
Ավտոմեքենա ՌԱՖ-2203	691 SL 65	1	100,000
Ավտոմեքենա ՊԱԶ-762	660 SL 65	1	362,500
Ավտոմեքենա ԳԱԶ-5312	05-87 АДМ	1	150,000
Ավտոմեքենա ԶԻԼ-ՄՄԶ-4502	42-85 АДУ	1	231,000
Ավտոմեքենա ՈՒԱԶ-330301	701 SL 65	1	153,000
Ավտոմեքենա ԶԻԼ-180-ԱՍ-161	90-87 АДЛ	1	213,000
Ավտոմեքենա ԶԻԼ-133-2 /հրդեհի/	80-08 АДК	1	366,000
Ավտոմեքենա ԳԱԶ-53 /Կամերվագեն/	45-20 АДМ	1	163,000
Ավտոմեքենա ԳԱԶ-53-12 /Կամերվագեն/	693 SL 65	1	163,300
Ավտոմեքենա ԿՎԶ-685-Մ	05-86 АДМ	1	382,500
Ավտոմեքենա ԿՎԶ-685-Մ	695 SL 65	1	352,500
Ավտոմեքենա ԵՐԱԶ-762	66-78 АДР	1	144,000
Ավտոմեքենա ԳԱԶ-53 Ա	80-07 АДК	1	185,500
Ավտոմեքենա ԳԱԶ-53-Ա	94-63 АДЛ	1	169,200
Ավտոմեքենա ԳԱԶ-53-0153	51-95 АДК	1	150,000
Ընդամենը		**28**	**18,778,500**
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	**Քանակ**	**Արժեք, ՀՀ դրամ**	**Գումար**
Դա Վինչի համակարգ 1	1	5,000,000	5,000,000
Դա Վինչի համակարգ 2	1	5,000,000	5,000,000
Կինոխցիկ ARRI	1	5,000,000	5,000,000
ARRI ULTRA PRIME լինզաների կոմպլեկտ (բաղկացած 5 լինզաներից)	1	22,070,063	22,070,063
Համակարգիչ CPU Core 2	2	10,000	20,000
Համակարգիչներ	2	10,000	20,000

Ջրաչափ	2	20,000	40,000
Ռելե	1	5,000	5,000
Ընդամենը	**11**		**37,155,063**
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՒՅՔ /ԿԱՀՈՒՅՔ/	**Քանակ**	**Արժեք, ՀՀ դրամ**	**Գումար**
Բազկաթոռ փափուկ, կարմիր կաշվե պաստառ., մեծ	6	11,717	70,302
Բազմոց /հին/	1	20,000	20,000
Բազմոց անկյունային նարնջագույն, փափուկ	1	70,000	70,000
Գրապահարան երկդռնանի	2	15,000	30,000
Կաշվից փոքր բազմոց /վնասված/	1	70,000	70,000
Կլոր ապակյա սեղան, կարմիր	1	40,000	40,000
Ջահ 3 լամպ.	2	4,000	8,000
Ջահ մեծ	8	11,717	93,736
Սեղան ամսագրերի	1	43,167	43,167
Սպիտակ մետ. կաշ. աթոռ /կլոր/	6	12,334	74,004
Փայտե աթոռ /կարմիր կտորի պաստառ./	5	12,334	61,670
Փայտից աթոռ կանաչ. պաստառ.	2	12,334	24,668
Ընդամենը	**36**		**605,547**
ՌԵԿՎԻԶԻՏ, Բեմիրեր	**Քանակ**	**Արժեք, ՀՀ դրամ**	**Գումար**
Արխալուղ վրացական	4	154	616
Չուխա (վրացական զգեստ) Աբա	4	385	1,540
Այցեքարտ	1	77	77
Փարանջա սև	1	360	360
Ֆրակ սև	1	154	154
Բաճկոն, զգեստ զինվորական գերմանական	8	2,732	21,856
Չուխա (վրացական զգեստ)	1	77	77
Չուխա Չերկեսյան (վրացական զգեստ)	27	1,300	35,100
Սքեմ եկեղեցական խալաթ	1	154	154
Չուխա (վրացական զգեստ)	1	308	308
Չերկեսյան զգեստ սպիտակ	1	462	462
Բաճկոն երկար	1	77	77
Խալաթ պատմական	1	77	77
Ֆիգարո	1	77	77
Լայն խալաթ կանաչ	2	539	1,078
Լայն խալաթ կանաչ	1	116	116
Զգեստ թավշյա	1	346	346
Լայն խալաթ ծաղրածուի	1	77	77
Թիկնոց	2	77	154
Լայն խալաթ	1	77	77
Չուխա (վրացական զգեստ) պատմական	1	154	154
Չուխա (վրացական զգեստ) խալաթ	1	539	539
Չուխա (վրացական զգեստ)	1	77	77
Չուխա (վրացական զգեստ) Աբա	1	77	77
Արխալուղ	1	154	154
Ֆիգարո պատմական	1	77	77
Չուխա (վրացական զգեստ)	1	154	154
Լայն խալաթ	2	77	154
Արխալուղ	1	339	339
Արխալուղ կանաչ մետաքս	10	770	7,700

Արխալուղ սև	1	154	154
Արխալուղ	4	847	3,388
Ֆիգարո սև	1	154	154
Կաբա կանաչ	20	500	10,000
Օղազրահ ցանցավոր	4	1,910	7,640
Բաճկոն փարչայից	6	385	2,310
Զրահագուստ ցանցավոր	13	1,200	15,600
Գլխանոց	55	380	20,900
Թիկնոց մետաքս	1	231	231
Թիկնոց կարմիր	1	60	60
Համազգեստ գուսարի	7	210	1,470
Զգեստ փայլուն	1	100	100
Խալաթ պատմական յասամանագույն	1	120	120
Զգեստ տղամարդու	1	80	80
Խալաթ պատմական	1	90	90
Արխալուղ թավշյա	1	46	46
Համազգեստ կապույտ սուկնոյի	9	410	3,690
Փափախ	2	693	1,386
Կիվեր	70	320	22,400
Գլանագլխարկ սև	1	77	77
Փոքր կաթսա ֆետրից	3	154	462
Գլխարկ վրացական	36	231	8,316
Չուխա (վրացական զգեստ)	1	50	50
Չուստ ծղոտից	51	-	-
Խալաթ փայլուն ոսկյա	1	320	320
Զգեստ թավշյա	1	200	200
Զգեստ պատմական սպիտակ	1	385	385
Զգեստ սպիտակ թավշյա	1	385	385
Զգեստ պատմական	1	231	231
Զգեստ պատմական սպիտակ	1	462	462
Անթարա վելվետ	12	1,200	14,400
Զգեստ տաֆտայից ծաղկավոր	1	934	934
Զգեստ թավշյա	1	539	539
Զգեստ պատմական թավշյա	1	616	616
Զգեստ պատմական կարմիր	1	693	693
Զգեստ թավշյա	1	616	616
Զգեստի գոտի պատմական	2	308	616
Զգեստ պատմական	1	539	539
Անթարա	23	930	21,390
Ջուբա սփռոց	1	1,155	1,155
Զգեստ պատմական	1	385	385
Զգեստ պատմական շականակագույն	1	385	385
Զգեստ պատմական կապույտ	1	385	385
Բլուզ-շապիկ թավշյա	2	385	770
Զգեստ բորդո գույնի թավշյա	1	693	693
Աբա	2	154	308
Կաբա թավշյա	1	154	154
Զգեստ պատմական	2	710	1,420
Զգեստ	1	231	231
Վերնաշապիկ պատմական	1	77	77
Թիկնոց պատմական սև	1	385	385
Զգեստ	1	539	539
Թիկնոց/փոքր չափի/	1	-	-
Թիկնոց պատմական շականակագույն	1	616	616
Շրջազգեստ բաց շականակագույն	1	77	77

Շրջազգեստ կարմիր թավշյա	1	154	154
Արխալուղ	1	77	77
Արխալուղ մանկական	1	-	-
Վերնաշապիկ	1	154	154
Արխալուղ մանկական	1	154	154
Արխալուղ մանկական	1	462	462
Զգեստ պատմական շականակագույն	1	385	385
Զգեստ պատմական շականակագույն	1	462	462
Զգեստ պատմական շականակագույն թավշյա	1	1,540	1,540
Ֆիգարո	3	1,232	3,696
Բաճկոն	5	847	4,235
Զգեստ պատմական	1	539	539
Արխալուղ	2	462	924
Զգեստ պատմական	1	539	539
Զգեստ պատմական սպիտակ	1	385	385
Վերարկու պատմական մոխրագույն	1	693	693
Բաճկոն, զգեստ կանացի պատմական շականակագույն	1	693	693
Թիկնոց պատմական մոխրագույն	1	385	385
Զգեստ պատմական	1	308	308
Զգեստ պատմական	1	231	231
Զգեստ պատմական վարդագույն	1	154	154
Զգեստ բաց շականակագույն	1	539	539
Թիկնոց պատմական	1	462	462
Թիկնոց պատմական	1	231	231
Թիկնոց պատմական սև	1	231	231
Թիկնոց սև կրեպ	1	154	154
Թիկնոց սև	1	154	154
Թիկնոց-անձրևանոց	1	693	693
Զգեստ	1	154	154
Զգեստ պատմական սև	1	462	462
Զգեստ թավշյա կանաչ	1	308	308
Աբա փարչա	1	100	100
Օձիք սև ձեռագործած	1	77	77
Բաճկոն խալաթ	2	616	1,232
Զգեստ	1	308	308
Խալաթ	1	308	308
Զգեստ	1	539	539
Աբա	1	616	616
Զգեստ պատմական	1	1,000	1,000
Զգեստ մետաքսե ծաղկավոր	1	154	154
Զգեստ պատմական	1	539	539
Թիկնոց	9	924	8,316
Շրջազգեստ գծավոր	3	462	1,386
Շրջազգեստ	2	385	770
Շրջազգեստ պատմական	1	154	154
Վերարկու պատմական կրիմպլին	1	308	308
Զգեստի վերև կանացի	1	154	154
Վերարկու կրիմպլին	1	539	539
Վերարկու պատմական	1	231	231
Աֆթալա արաբական	1	100	100
Ապարատ Մորզե	1	80	80
Գավաթ լատունե	5	200	1,000
Թմբուկ պիոներական	1	70	70
Գինու թաս	1	40	40

Ստալինի կիսանդրի	1	50	50
Կիսանդրի Մ. Խորենացի	1	70	70
Կիսանդրի քրդական	4	70	280
Գոտի կաշվե Զանգեզուր	2	100	200
Գավաթ լատունե	3	100	300
Սկահակ մետաղյա	2	70	140
Ծաղկաման կերամիկայից	4	100	400
Կշեռք բուտաֆոր	3	150	450
Գյուգյում	5	100	500
Թաս չուգունե	6	70	420
Գոր դարբնի	1	40	40
Ջվալ բամբակյա	1	40	40
Տախտակ լվացքի	2	70	140
Ջվալ մոխրագույն	1	50	50
Կշիռ բուտաֆորական	8	100	800
Ձայնասկավառակ	12	70	840
Գալարաձող	15	150	2,250
Դրոշ եկեղեցու	1	70	70
Նշան	100	100	10,000
Կրծքանշան ՍՍՀՄ-ի	1	80	80
Դրամարկղ եկեղեցական	1	70	70
Կաշկուր փայտե	1	60	60
Թաս լվացքի պղնձե	2	70	140
Կաթսա չուգունից	1	70	70
Բռնիչ դարբնի	5	180	900
Ծանր չագուչ	4	100	400
Ձեռնաշղթա	1	80	80
Գրքեր եկեղեցական	42	400	16,800
Ջրի աման պղնձե	1	70	70
Գորգ կարմիր	1	4,000	4,000
Կարպետ գծավոր	1	500	500
Կարպետ հին	1	1,800	1,800
Կարպետ հին	1	1,500	1,500
Գորգ հին մաշված	1	2,000	2,000
Գորգ փոքր բորդո	1	1,800	1,800
Եկեղեցական գորգիկ	2	40,000	80,000
Ղազան պղնձյա	5	50	250
Նկար յուղաներկով	6	60	360
Բնանկար Գարուն	1	40	40
Կուլա ջրի	1	60	60
Փոքրիկ կաթսա զինվորական	6	94	564
Կոմուտատոր	1	40	40
Բռնիչներ մետաղյա	2	80	160
Մատանի արծաթյա	1	5,000	5,000
Կճուճ շաուրմայի	2	100	200
Կճուճ կավե	1	80	80
Կճուճ ղաուրմի	1	100	100
Չուգունե աման	1	70	70
Կարպետ	1	5,000	5,000
Կաթսա պղնձյա	2	70	140
Կրյուշոնի աման	1	100	100
Լամպ նավթի	3	210	630
Լամպ նավթի	2	100	200
Գդալ փայտե	2	80	160
Լամպ չուգուն	1	40,000	40,000

Նետ ու աղեղ	13	210	2,730
Չանախի թաս	7	70	490
Զարդեր	1	10,000	10,000
Զարդեր հնաոճ	1	40,000	40,000
Արծաթե կոպ	2	60,000	120,000
Արծաթե շղթա	1	5,000	5,000
Սկուտեղ տարբեր	16	280	4,480
Երաժշ. գործիք.	2	250	500
Պատեֆոն	1	300	300
Պլաստինկաների պատեֆոն	3	100	300
Պղնձե աման	3	250	750
Գնդացիրի լենտ	3	140	420
Փլավքամիչ մեծ	1	120	120
Կաթսայի տակ	1	70	70
Արծաթե գոտի	15	15,000	225,000
Եկեղեցական գոտի	1	15,000	15,000
Կոճակ վարշավ արծաթ	2	2,000	4,000
Փոստարկղ	4	220	880
Գրիչ դպրոցական	2	250	500
Շրջանակ նկարի	7	420	2,940
Շրջանակ նկարի	7	420	2,940
Գոտի	43	1,100	47,300
Ինքնաեռ	3	165	495
Մաղ մեծ ու փոքր	5	300	1,500
Ինքնաեռ	2	180	360
Արձան Նիկա	2	250	500
Արձան կին	1	1,000	1,000
Սինի եկեղեցական	1	170	170
Սփռոց եկեղեցական	1	70	70
Սանդերի	1	100	100
Կրծքազարդ արծթյա	1	5,000	5,000
Պայուսակ դաշտային	1	100	100
Թզբեխ սաթից	1	400	400
Թաս լատունե	9	430	3,870
Թութունի աման	1	160	160
Թասակ գլխարկ	1	2,000	2,000
Արդուկ չուգունե	4	580	2,320
Լվացարան այլումինե	1	350	350
Արդուկ ածուխի	1	85	85
Ֆոտոապարատ Զենիթ	1	230	230
Խուրջին գորգե	1	310	310
Չունգուր երաժշ.	2	80	160
Թանաքամանի սարք	7	3,000	21,000
Թանաքաման	5	100	500
Շերեփ երկաթյա	6	160	960
Սաղավարտ պատմական	15	190	2,850
Նկարչական ալբոմ	1	140	140
Երկանք	1	70	70
Արկղ փոստային	1	30	30
Բրա բրոնզե	1	40	40
Սկահակ դեկորատիվ	1	40	40
Ծաղկաման չին. ֆարֆոր	1	70	70
Գյուգյում պղնձե	2	94	188
Մոմակալ եկեղեցական	1	40	40
Աման պղնձե	2	80	160

Արծան աղջկա	1	70	70
Դույլ շամպայնի	3	210	630
Արծանիկ բրոնզե	2	10,000	20,000
Աման երեխա կնքելու	1	80	80
Ակարդեոն	1	100	100
Լուսամփոփ բահրամայով	1	120	120
Սեղանի բրա	1	110	110
Հորթի օրիգինալ	1	70	70
Ցուլիկի մակետ	1	150	150
Պոպոններ ուլունքներով	5	150	750
Ջահ պղնձե	1	100	100
Գորգ	1	30,000	30,000
Կարպետ	3	30,000	90,000
Հովանոց պատմական	2	30,000	60,000
Պահարան հնավոճ	1	100,000	100,000
Պահարան պատմական	1	100,000	100,000
Կոմոդ անտիկ	1	50,000	50,000
Բազկաթոռ կաշվե	1	10,000	10,000
Բազկաթոռ ամառ.	2	20,000	40,000
Ֆաետոն	1	1,000,000	1,000,000
Սեղան փոքր կլոր	1	30,000	30,000
Պահարան անտիկ "Ֆաուստ"	1	4,000,000	4,000,000
Պահարան անտիկ	1	10,000	10,000
Հարդասեղան մեծ	1	80,000	80,000
Երգեհոնիկ	1	15,000	15,000
BMW ավտոմեքենա	1	1,000,000	1,000,000
Ընդամենը	**1053**		**7,605,049**

2. Անշարժ գույք՝ Շենք, Շինություններ

#	ք. Երևան, Աշտարակի խճուղի, 30 հասցեում գտնվող շենք, շինությունները	Կադաստրային ծածկագիրը	Մակերեսի չափը,ք.մ	Արժեք, ՀՀ դրամ
1	Անցագրային կետ և Ենթակայան	01-004-0061-0028-001	507.5	45,459,000
2	Գլխավոր մասնաշենք	01-004-0061-0028-002	7,067.6	441,587,000
3	Գլխավոր մասնաշենք	01-004-0061-0028-003-000	2,170.0	114,076,000
4	Ջրավազան	01-004-0061-0028-004-000	849.5	2,843,000
5	Ֆոտոարտադրամաս	01-004-0061-0028-005	268.3	12,753,000
6	Լուսավորման Արտադրամաս	01-004-0061-0028-006	479.3	5,413,000
7	Նկարահանման Տաղավարներ	01-004-0061-0028-007	2,784.9	197,334,000
8	Ժապավենի մշակման արտադրամաս	01-004-0061-0028-008	2,365.4	142,209,000
9	Ժապավենի մշակման արտադրամաս	01-004-0061-0028-009	329.6	12,628,000
10	Մեխանիկական Արտադրամաս (այդ թվում՝ 11.8 ք.մ. ինքնակամ)	01-004-0061-0028-010	1,572.5	63,067,000
11	Ենթակայան	01-004-0061-0028-012	49.6	6,280,000
12	Նկարահանումների նախապատրաստական արտադրամաս	01-004-0061-0028-013	355.3	11,121,000
13	Նկարահանումների նախապատրաստական արտադրամաս	01-004-0061-0028-014	158.2	2,934,000

14	Դեկ. շին. կոլեկտոր	01-004-0061-0028-015	362.5	14,412,000
15	Պահեստ	01-004-0061-0028-016	2,015.2	86,615,000
16	Ջեռուցման տնտեսություն	01-004-0061-0028-017	512.9	19,581,000
17	Ջեռուցման տնտեսություն	01-004-0061-0028-018	71.3	3,523,000
18	Պիրոտեխնիկական պահեստ	01-004-0061-0028-019	81.0	2,184,000
19	Պիրոտեխնիկական պահեստ	01-004-0061-0028-020	27.6	611,000
20	Հին Երևան	01-004-0061-0028-021	147.4	9,342,000
21	Կաթսայատուն	01-004-0061-0028-022	21.7	1,961,000
22	Կաթսայատուն	01-004-0061-0028-023	17.2	1,228,000
23	Հսկիչ կետ (այդ թվում՝ 14.1 ք.մ. ինքնակամ)	01-004-0061-0028-024	17.0	880,000
24	Պարիսպ, (728.2 խ.մ) (այդ թվում՝ 40 ք.մ. ինքնակամ)	01-004-0061-0028-025	371.0	12,895,000
	Ընդամենը		22,602.5	**1,210,936,000**

3. Անշարժ գույք՝ Հողամասեր

Հողամասերի նկարագրությունը	Կադաստրային ծածկագիրը	մակերեսի չափը (հա)	Արժեք, ՀՀ դրամ
1. ք. Երևան, Աշտարակի խճուղի, 30 հասցեում գտնվող հողակտոր, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 11032015-01-0120	01-004-0061-0028	25.811984	1,196,504,433
2. ք. Երևան, Աշտարակի խճուղի, 30/1 հասցեում գտնվող հողակտոր, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 2074581	01-004-060-001	4.116	230,885,014
Ընդամենը		**29.927984**	**1,427,389,447**

Հավելված N 3.
Բաժնետոմսերի Փոխանցման Պայմանագրի

Հարկային տեսչության հաշվետվություն
[լրացվում է միայն հայերեն]

Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարություն
Ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչություն
ստուգող ստորաբաժանման անվանումը

«01» հուլիսի 2015թ.

ք. Երևան
կազմման վայրը

ՏԵՂԵԿԱՆՔ No 5011918

0 0 7 0 3 7	գլխավոր հարկային տեսուչ՝ Հակոբ Մարտիրոսի Վարդանյան ստուգողի անձնական կոդը, պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը
7 7 0 7 2 6	գլխավոր հարկային տեսուչ՝ Սամվել Ռաֆիկի Ջիտղյան ստուգողի անձնական կոդը, պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը
7 1 4 4 0 1	ավագ հարկային տեսուչ՝ Գեորգ Միսակի Թումանյան ստուգողի անձնական կոդը, պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը
7 4 6 5 7 1	ավագ հարկային տեսուչ՝ Վահրամ Արմենի Սինդոյան ստուգողի անձնական կոդը, պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը
7 2 7 2 1 7	ավագ հարկային տեսուչ՝ Անուշ Հրաչիկի Գրիգորյան ստուգողի անձնական կոդը, պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի «18» մայիսի 2015թ. թիվ 5011918 հանձնարարագրի 25.05.2015թ.-ից մինչև 29.06.2015թ.-ը կատարեցինք

«ՀԱՄՈ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ «ՀԱՅՖԻԼՄ» ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱ» ՓԲԸ — ՀՎՀՀ 0 1 2 3 7 8 5 6
տնտեսավարող սուբյեկտի անվանումը, իրավական տեսակը

մասնակցությամբ՝

գլխավոր տնօրեն՝ Խաչատուր Յոկոլակյանի
տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) պաշտոնը, անունը, ազգանունը

հաշվապահական հաշվառումը վարելու համար պատասխանատու անձի պաշտոնը, անունը, ազգանունը

բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում՝ հանձնարարագրում (հրամանում) նշված հարցերի շրջանակներում, որի արդյունքում խախտումներ չհայտնաբերվեցին:

Սույն տեղեկանքին կցվում են դրա անբաժանելի մասը հանդիսացող

փաստաթղթեր, արձանագրություններ, հայտարարություններ, բացատրություններ, հավելվածներ:

ընդամենը — թերթ

Ստուգողներ

Հակոբ Վարդանյան
անուն, ազգանուն, ստորագրություն

Սամվել Ջիտղյան
անուն, ազգանուն, ստորագրություն

Գեորգ Թումանյան
անուն, ազգանուն, ստորագրություն

Վահրամ Սինդոյան
անուն, ազգանուն, ստորագրություն

Անուշ Գրիգորյան
անուն, ազգանուն, ստորագրություն

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավար, հաշվապահ
(փոխարինող պաշտոնատար անձ)
անուն, ազգանուն, ստորագրություն

անուն, ազգանուն, ստորագրություն

Կ.Տ.

Ամսաթիվ՝ 01/07/2015

83510201079

էջ 1 - 2 էջից

Նշում տարածայնությունների վերաբերյալ

Տարածայնությունները կցվում են, առկիր՝ — թերթ:

Սույն տեղեկանքը կազմվել է Երեք (տասներով) օրինակից:

Ստացա տեղեկանքի մեկ օրինակը ստորագրություն «01» 03 2015 թ.

տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը

Նշում տեղեկանքը ստորագրելուց հրաժարվելու մասին

Ամսաթիվ՝ 01/07/2015

83510201079

էջ 2 - 2 էջից

Հավելված N 4

Բաժնետոմսերի Փոխանցման Պայմանագրի

Ընկերության պարտավորությունների և Պայմանագրերի ցուցակ

No	Պայմանագիր/ Պարտավորություն	Կողմը	Գին/ Պարտավորություն	(Վերա) Վճարման Պայմաններ	Ավարտման ամսաթիվ	Նշումներ
1.	Աշխատանքային պայմանագիր N305, 16.04.2010	Աիդա Գրիգորյան	Ամսական զուտ աշխատավարձ 60000 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Պահեստա-պետ, գանձապահ
2.	Աշխատանքային պայմանագիր N01, 31.01.2014	Խաչատուր Ցոկոլակյան	Ամսական զուտ աշխատավարձ 55000 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Տնօրեն
3.	Աշխատանքային պայմանագիր N02, 01.02.2014	Խորեն Սոմխյան	Ամսական զուտ աշխատավարձ 150000 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Անվտան-գության ծառ. պետ
4.	Աշխատանքային պայմանագիր N03, 01.02.2014	Սուսաննա Վարդանյան	Ամսական զուտ աշխատավարձ 55000 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Հավաքարար
5.	Աշխատանքային պայմանագիր N04, 01.02.2014	Վարդան Ավետիսյան	Ժամավճարային աշխատավարձ զուտ 380 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Պահակ
6.	Աշխատանքային պայմանագիր N05, 01.02.2014	Մուշեղ Սահակյան	Ժամավճարային աշխատավարձ զուտ 380 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Պահակ
7.	Աշխատանքային պայմանագիր N06, 01.02.2014	Մարատ Մարգարյան	Ժամավճարային աշխատավարձ զուտ 380 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Պահակ
8.	Աշխատանքային պայմանագիր N07, 10.02.2014	Կարեն Խլղաթյան	Ժամավճարային աշխատավարձ զուտ 380 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Պահակ
9.	Աշխատանքային պայմանագիր N08, 20.02.2014	Հովիկ Գրիգորյան	Ամսական զուտ աշխատավարձ 80000 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Էլեկտրիկ
10.	Աշխատանքային պայմանագիր N01-15, 02.03.2015	Իննա Բաբայան	Ամսական զուտ աշխատավարձ 55000 դր	Ամսական մինչհաջորդող ամսվա 15-ը	անորոշ	Գլխ. տնօրենի օգնական
11.	Պայմանագիր ֆիլմերի օգտագործման մասին, 20.11.2012	«Հայաստանի հանրային հեռուստաընկեռ ություն» ՓԲԸ	Մեկ ֆիլմի ցուցադրության համար 18000 դր ներառյալ ԱԱՀ	Ամսական ըստ հաշիվ-ապրանքագրի	30.09.2015	Ֆիլմերի ցուցադրման իրավունք
12.	Պայմանագիր ֆիլմերի օգտագործման մասին, 29.03.2013	«Շարկ» ՍՊԸ	Մեկ ֆիլմի ցուցադրության համար 18000 դր ներառյալ ԱԱՀ	Ամսական ըստ հաշիվ-ապրանքագրի	31.12.2015	Ֆիլմերի ցուցադրման իրավունք
13.	Պայմանագիր ֆիլմերի օգտագործման մասին, 31.01.2014	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ	Մեկ ֆիլմի ցուցադրության համար 18000 դր ներառյալ ԱԱՀ	Ամսական ըստ հաշիվ-ապրանքագրի	31.12.2015	Ֆիլմերի ցուցադրման իրավունք
14.	Պայմանագիր ֆիլմերի օգտագործման մասին, 01.06.2014	«Ա-ԹիՎի» ՍՊԸ	Մեկ ֆիլմի ցուցադրության համար 18000 դր ներառյալ ԱԱՀ	Ամսական ըստ հաշիվ-ապրանքագրի	30.06.2016	Ֆիլմերի ցուցադրման իրավունք
15.	Պայմանագիր ֆիլմերի օգտագործման մասին, 31.10.2014	«Հ3 հեռուստաընկերո ություն» ՓԲԸ	Մեկ ֆիլմի ցուցադրության համար 18000 դր ներառյալ ԱԱՀ	Ամսական ըստ հաշիվ-ապրանքագրի	31.12.2015	Ֆիլմերի ցուցադրման իրավունք
16.	Պայմանագիր ֆիլմերի օգտագործման մասին, 01.04.2015	«Արմնյուզ» ՓԲԸ	Մեկ ֆիլմի ցուցադրության համար 18000 դր ներառյալ ԱԱՀ	Ամսական ըստ հաշիվ-ապրանքագրի	31.03.2016	Ֆիլմերի ցուցադրման իրավունք
17.	Պայմանագիր ֆիլմերի օգտագործման մասին, 01.04.2015	«ԱՐ Հեռուստաընկեր ություն» ՍՊԸ	Մեկ ֆիլմի ցուցադրության համար 18000 դր ներառյալ ԱԱՀ	Ամսական ըստ հաշիվ-ապրանքագրի	01.04.2016	Ֆիլմերի ցուցադրման իրավունք

18.	Պայմանագիր ֆիլմերի օգտագործման մասին, 01.04.2015	«Մուլտի Մեդիա-Կենտրոն ԹիՎի» ՓԲԸ	Մեկ ֆիլմի ցուցադրության համար 18000 դր ներառյալ ԱԱՀ	Ամսական ըստ հաշիվ-ապրանքագրի	31.03.2018	Ֆիլմերի ցուցադրման իրավունք
19.	Վարձակալության պայմանագիր	«Էքսպրոմտ» ՍՊԸ	Ամսական 300,000 դր. և ջրի վարձ ըստ ջրաչափի ցուցմունքի		անորոշ	Վարձակա-լություն
20.	Վարձակալության պայմանագիր, 11.08.2006	«Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամ	Ամսական 225,000 դր		անորոշ	Վարձակա-լություն
21.	Գազամատակարարման պայմանագիր	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	Ամսական ըստ գազաչափի ցուցմունքի		անորոշ	
22.	Ջրամատակարարման պայմանագիր 9-10-12, 19.02.09	«Երևան ջուր» ՓԲԸ	Ամսական ըստ ջրաչափի ցուցմունքի		անորոշ	
23.	Էլեկտրամատակա-րարման պայմանագիր	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	Ամսական ըստ հաշվիչի ցուցմունքի		անորոշ	
24.	Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր, 16.01.2015	Ա/Ձ Լարիսա Մեսրոբյան	Ամսական 200000 դր	Ամսական	16.01.2016	Հաշվապա-հական խորհրդատ-վություն
25.	Պարտավորագիր (Վարկային պայմանագիր)	Գաֆէսճեան Ընտանեկան Հիմնադրամ	176,142 ԱՄՆ դոլար և 10,850,000 ՀՀ դրամ՝ 01.07.2015 թ. դրությամբ	31.12.2015թ.	31.12.2015թ.	
26.	Պարտավորագիր (Վարկային պայմանագիր)	Արտեմ Սարգսյան	95,320 ԱՄՆ դոլար և 28,923,700 ՀՀ դրամ՝ 01.07.2015 թ. դրությամբ	31.12.2015թ.	31.12.2015թ.	
27.	«Հայֆիլմ» ապրանքային նշան	ՀՀ Մտավոր սեփականության գործակալություն	5.0 մլն դրամ	29.10.2008թ.	29.10.2018թ.	
28.	Ենթալիցենզային պայմանագիր (պայմանագրի մի մասը ենթակա է լուծման)	«Կարեն Ստուդիա» ՍՊԸ	60.0 մլն դրամ	17.12.2007թ.	17.12.2022 թ.	Ֆիլմերը DVD-ների վրա արտադրելու իրավունք

Հավելված N 5
Բաժնետոմսերի Փոխանցման Պայմանագրի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան

_____ 2015 թ.

[ենթակա է լրացման] (այսուհետ՝ «Ցեդենտ»), ի դեմս [ենթակա է լրացման], ով գործում է [ենթակա է լրացման]-ի հիման վրա, մի կողմից, և

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Աշոտ Արզումանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝«Ցեսիոներ»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 402-405-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ---N -Ն որոշման ---րդ կետի պահանջները, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Ցեդենտը 5 000 000 դրամ հատուցման դիմաց զիջում է, իսկ Ցեսիոներն ընդունում «Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Պարտապան») նկատմամբ պահանջի իրավունքը, որն առաջացել է Ցեդենտի և Պարտապանի միջև կնքված [ենթակա է լրացման] պայմանագրից:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետին համապատասխան զիջվող պահանջի գումարը [ենթակա է լրացման] 2015 թ. --- օրվա դրությամբ կազմում է [ենթակա է լրացման] դրամ, որը հիմնավորված է ----------:

1.3 Ցեդենտը պարտավոր է Ցեսիոներին փոխանցել պահանջի իրավունքը հիմնավորող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (բնօրինակները) ըստ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի՝ ընդունման-հանձման ակտով պայմանագրի կնքման պահին, դրանք են.

[ենթակա է լրացման]

[ենթակա է լրացման]

[ենթակա է լրացման]

1.4. Ցեդենտը երաշխավորում է իր պահանջի իրավունքի լրիվ ծավալով վավերությունը:

1.5. Սույնով Ցեսիոները հավաստում է, որ ուսումնասիրել է 1.3-8d կետում նշված փաստաթղթերը և համապատասխան հիմնավորումները, դրանց հետ կապված դիտողություններ կամ առարկություններ չունի, միաժամանակ հավաստիացել է նշված փաստաթղթերի իսկության մեջ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Ցեդենտը պարտավոր է՝

2.1.1. Ցեսիոներին ժամանակին ապահովել պահանջի իրավունքը հանձնելու վերաբերյալ լրիվ տեղեկատվությամբ

2.1.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում Պարտապանին հայտնել Ցեդենտի իրավունքները Ցեսիոներին անցնելու մասին և կրել դրա չկատարման հետևանքից բխող բոլոր բացասական ռիսկերը

2.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից Ցեսիոները ձեռք է բերում սույն պայմանագրով զիջվող պահանջի իրավունքները և օժտվում է Ցեդենտի որպես պարտատիրոջ իրավունքներով:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1 Ցեդենտը պատասխանատվություն չի կրում զիջված պահանջը Ցեսիոների կողմից Պարտապանի կատարմանը ներկայացնելու դեպքում, վերջինիս կողմից այն չկատարելու կամ անպատշաճ կատարելու կամ ներկայացված պահանջները և ապահովման միջոցները որևէ հիմքով վիճարկելու:

3.2 Ցեդենտը Ցեսիոների առջև պատասխանատվություն է կրում իր կողմից երաշխավորված և զիջվող դրամական պահանջի իրական լինելու համար:

4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրելու պահից:

4.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հայերեն և անգլերեն լեզվով օրինակների միջև հակասության դեպքում, առաջնությունը տրվում է հայերեն լեզվով օրինակին: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Ցեդենտ՝ ՀՎՀՀ ----------

_____

Ցեսիոներ՝ ՀՎՀՀ ----------

_____

Հավելված N 6
Բաժնետոմսերի Փոխանցման Համաձայնագրի

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ

Սույնով Փոխանցող 1-ը, Փոխանցող 2-ը և Ստացողը հավաստում են առ այն, որ.

1. Փոխանցողները պատշաճորեն փոխանցել են Ստացողին Ընկերության բոլոր բաժնետոմսերը:
2. Ստացողը պատշաճորեն փոխանցել է Փոխանցողներին Գույքի փոխանցման վճարն ամբողջությամբ:
3. Ստացողը սույնով հավաստում և հաստատում է, որ չունի որևէ պահանջ Ընկերության, Փոխանցողների, նրանցից որևէ մեկի, նրանց բաժնետերերի, ղեկավարների, տնօրենների, աշխատակիցների և նրանց հետ փոխկապակցված անձանց նկատմամբ կապված սույն Պայմանագրի կատարման հետ, ինչպես նաև Ընկերությանը պատկանող գույքի և ակտիվների մասով:
4. Ստացողը սույնով հաստատում և հավաստում է, որ սույն Ավարտական Ակտի ստորագրման պահից Փոխանցող 1-ը, վերջինիս բաժնետերերը, ղեկավարները, տնօրենները, աշխատակիցները և նրանց հետ փոխկապակցված անձինք ազատվում են որևէ պատասխանատվությունից 2005 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքն օտարելու մասին N 321-Օ պայմանագրի, ինչպես նաև դրա հետ կապված, դրան վերաբերող և դրա իրականացմանն ուղղված ցանկացած այլ պայմանագրի և (կամ) համաձայնագրի ներքո, իսկ նշված թիվ 321-Օ պայմանագիրը, ինչպես նաև դրան վերաբերող և դրա իրականացմանն ուղղված ցանկացած այլ պայմանագիր և (կամ) համաձայնագիր համարվում է լուծված՝ առանց որևէ հետագա պատասխանատվության և (կամ) պարտավորության Փոխանցող 1-ի, վերջինիս բաժնետերերի, ղեկավարների, տնօրենների, աշխատակիցների և նրանց հետ փոխկապակցված անձանց համար:
5. Սույն Ավարտական Ակտը ստորագրվել է 2015 թվականի [ենթակա է լրացման] քաղաք Երևանում՝ 5 հավասարազոր օրինակից և կցվում է Պայմանագրին, ինչպես նաև

14.09.2005թ. կնքված «Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքն օտարելու մասին թիվ 321-Օ պայմանագիրը լուծելու մասին սույն համաձայնագրին՝ որպես վերջինիս անբաժանելի մասը:

6. Սույն Ավարտական Ակտն ենթակա է վավերացման նոտարական կարգով:
7. Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ, մեկ օրինակ մնում է այն վավերացված նոտարի մոտ:

ՓՈԽԱՆՑՈՂ 1/TRANSFEROR 1
«Ֆիլմ Ստուդիոս ՓԲԸ/Film Studios cjsc

Էդգար Ավագյան / Edgar Avagyan _____

ՓՈԽԱՆՑՈՂ 2/ TRANSFEROR 2
«Սի Էս Մեդիա Էնթերփրայզիս» ՍՊԸ/CS Media Enterprises LLC

Արեգ Լազարյան /Areg Lazaryan _____

ՍՏԱՑՈՂ/ RECEIVER
Հայաստանի Հանրապետություն/Republic of Armenia

[ենթակա է լրացման]/[to be completed] _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 31-ի N 1050 - Ա որոշման

Հայաստանի Հանրապետության և «Արմենիա Ստուդիոս» փակ բաժնետիրական ընկերության միջև 2005 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված N 321-Օ պայմանագրից բխող՝ կնքված պայմանագրերի ցանկ

1. 2005 թվականի հոկտեմբերի 12-ի պայմանագիր՝ ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 18-ի N 727-Ա և 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1355-Ա որոշումների իրագործման մասին
2. Պայմանագիր ֆիլմաֆոնդի օգտագործման մասին, 2005 թվականի հոկտեմբերի 12-ի
3. Համաձայնագիր՝ 2005 թվականի հոկտեմբերի 12-ի ֆիլմաֆոնդի օգտագործման մասին պայմանագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, 2005 թվականի օգոստոսի 12-ի
4. Անժարժ գույքի ներդրման պայմանագիր, 2005 թվականի հոկտեմբերի 11-ի
5. Պայմանագիր՝ ապրանքային նշանի զիջման մասին, 2005 թվականի նոյեմբերի 7-ի
6. Պայմանագիր՝ ապրանքային նշանի վաճառքի և ֆիրմային անվանման փոխանցման մասին, 2005 թվականի հոկտեմբերի 12-ի
7. Պայմանագիր՝ օժանդակ գույքի վաճառքի մասին, 2005թ.-ի դեկտեմբերի 21-ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ